

Հայտարարություն

ՊԱՇՏՈՆ՝ Ապահովագրական ընկերության բժիշկ-մասնագետ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության խոշորագույն ապահովագրական ընկերություններից մեկն է, որը տարիներ շարունակ շուկայում զբաղեցնում է կայուն առաջատար դիրք: Ընկերությունը բարձրակարգ ապահովագրական ծառայություններ է մատուցում թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց՝ պաշտպանելով նրանց զանազան ռիսկերից: Ստեղծման առաջին իսկ տարվանից «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն մատուցում է առողջության ապահովագրության ծառայություններ, որոնց սպասարկման համար Ընկերության կազմակերպական կառուցվածքում առկա է Բժշկական հատուցումների վարչությունը:

Ներկա պահին նշված վարչությունում առկա է ապահովագրական ընկերության բժիշկ մասնագետի թափուր հաստիք: Մասնագիտությունը յուրահատուկ է և «երիտասարդ», այն կարևորագույն տեղ է զբաղեցնում բժշկական և ապահովագրական ոլորտների հատման դաշտում:

Ընտրված մասնագետին հնարավորություն է ընձեռնվելու աշխատել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի բազմաճյուղ ապահովագրված անձանց, ՀՀ առաջատար բժշկական հաստատությունների բժիշկների և նրանց ղեկավարների, ինչպես նաև ՀՀ տնտեսության առաջատար կազմակերպությունների հետ: Մասնագետը աշխատանքային առաջին իսկ օրերից ներգրավվում է ուսումնա-աշխատանքային գործընթացի մեջ՝ դառնալով պրոֆեսիոնալ և դինամիկ զարգացող թմի բաղկացուցիչ մաս: Նոր մասնագետի կրթումն իրականացվում է վարչության և բաժնի ղեկավարների կողմից, որոնց նա հաշվետու է իր ամենօրյա աշխատանքային պարտականությունները կատարելիս: Բժիշկ-փորձագետը պատասխանատու է իրեն կցված ապահովագրված անձանց առողջական վիճակի մոնիտորինգի, նրանց հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժման կազմակերպման, դրանց ֆինանսական և որակական վերահսկման համար: Մասնագետից պահանջվում է իր ապահովագրված անձանց առողջության ապահովագրության պայմանագրերի գերազանց իմացություն և դրանց մատչելի ու ճիշտ մատուցում: Բժիշկ-փորձագետը պետք է տեղեկացված լինի արդի բժշկագիտության բոլոր ճյուղերի նորագույն մոտեցումներին, պարբերաբար վարի լուսավորչական, ինտերակտիվ աշխատանքներ ապահովագրված անձանց հետ (առողջապահական և ապահովագրական թեմաներով): Աշխատանքի և մասնագիտական կայացման բարձր փուլերում մասնագետը պետք է ունենա իր ներդրումները բժշկական ապահովագրության նոր ծրագրերի ստեղծման մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ապահովագրված անձանց կողմից ներկայացված դիմումների և բժշկական փաստաթղթերի բժշկական և ապահովագրական փորձաքննություն
- Ապահովագրված անձանց դիմումների քանակական և որակական վերլուծություն
- Ապահովագրված անձանց հետ՝ բժշկական և ապահովագրական թեմաներով պարբերաբար կազմակերպվող հանդիպումների նախաձեռնում և իրականացում
- Բժշկական նշանակումների ճշգրտության և դրանց՝ արդի արձանագրերին համապատասխանության ստուգում
- Բժշկական հաստատությունների հետ առողջ համագործակցություն
- Ապահովագրված անձանց կողմից ստացված հեռախոսազանգերի սպասարկում
- Ապահովագրական պայմանագրերի գերազանց իմացություն և դրանց բովանդակության մատչելի մեկնաբանում հաճախորդներին
- Ապահովագրված անձանց բուժման համար հավաստիքների տրամադրում բժշկական հաստատություններին
- Կանխարգելիչ բժշկական ստուգումների կազմակերպում, դրանց արդյունքների վերլուծություն և համապատասխան խորհուրդների տրամադրում Ապահովագրված անձանց
- Այլ պարտականություններ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ



ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Բարձրագույն բժշկական կրթություն
- Բժշկի աշխատանքային փորձ (առավելություն է)
- Բարձր մարդասիրական հատկանիշներ
- Մարդկանց հետ շփվելու անհազ ցանկություն
- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Ժպտադեմ դիմախաղ և դրական աուրա
- Համակարգչային եւ ինտերնետային գրագիտության, մասնավորապես MS Office
- Հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ. Խնդրում ենք Ձեր ռեզյումեն ուղարկել hr@ingoarmenia.am էլեկտրոնային հասցեին՝ նամակի “Թեմա/Subject” տողում նշելով «Բժշկական հայտերի կարգավորման մասնագետ»:

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ Մայիսի 25, 2018թ.

Հավելյալ տեղեկատվություն՝

-  Դիտեք մեր կայքը: www.ingoarmenia.am
-  Հետևեք մեր ֆեյսբուքյան էջին: <https://www.facebook.com/ingoinsurance/>